

Ս. ՅՆԿՈՒՅԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՏԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 6 Հոկտ. — Տոն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամասերն մէջ: Ժամադարն էր Հոգը. Տ. Դաւիթ վրդ. Սահակեան:

● Կիր. 7 Հոկտ. — Բարեկեցում վարապալ Ս. Խաչի պանոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամադարն էր Հոգը. Տ. Յովսէփ վրդ. Մամուր:

● Ուր. 12 Հոկտ. — Նախատօնակը պաշտօնեցաւ, բայց սովորութեան, Ղպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր ընտան:

● Եր. 13 Հոկտ. — Ո. Գեորգ պաշտօնակը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ: Ժամադարն էր Հոգը. Տ. Գովորտաւ Արղ. Պատուէրեան: Ս. Պատարագէն ետք Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ նոյն վանքի Հոգը. Տեաչէն: Երթ ու դարձի թափօրներուն նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպսոպոս:

— Կէսօրէ ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպսոպոս գլխավորութեամբ, Միաբանութիւնը Վրացափառնով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Պատանառեղոյն և Ս. Գեորգյանի ախտերէն ետք թափօրը, անցնելով Տաճարի հարաւային թէկէն, իջաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վարագոյ թաչի նախատօնակը՝ նախագահութեամբ Գերշ. Լուսարարապետ Ս. Հօր: Ապա կատարուեցաւ Տօրինական Ս. Տեղեաց այցելութեան հանգիստաւր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգը. Տ. Յովսէփ վրդ. Մամուր:

● Կիր. 14 Հոկտ. — Տոն վարապալ Ս. Խաչին: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Գարուծիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպսոպոս ժամադր օրուան հանդիսաւր Ս. Պատարագը Գրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Նշարը մերէն առաջ կատարուեցաւ Հայրապետական Մայթանք՝ Ն. Ս. Օծնութիւն Տ. Տ. Վաղգէն Ա. Ամենայն Հայոց Գաթղիկոսի օծման 7րդ տարեդարձին առթիւ, Նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրեն Աբեղեպոսի:

● Եր. 20 Հոկտ. — 72 առակերտացի Գրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ս. Գեորգայ սեղանին վրայ: Պատարագէն Հոգը. Տ. Դաւիթ վրդ. Սահակեան:

● Կիր. 21 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամադարն էր Հոգը. Տ. Գեղամ Արղ. Զաքարեան:

● Ուր. 26 Հոկտ. — Թարգմանչաց հանդիսաւր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպսոպոս:

● Եր. 27 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետն: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագէն Հոգը. Տ. Յակոբ վրդ. վարդապետն էր: Օրուան տօնին շուրջ քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպսոպոս: Ապա, բոլոր սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգիստեան պաշտօն՝ հանգուցեալ ազգային մեծանուն բարերար Դաւիթ Վրացի Սեղանին ի իր գերեզմանին ներքին շէջեղաներու հոգիներուն համար, նախագահութեամբ Լորդպետ Գերշ. Տ. Հայրիկ Եպսոպոս:

● Կիր. 28 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գարուծիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամադարն էր Հոգը. Տ. Յովսէփ վրդ. Մամուր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Եր. 20 Հոկտ. — Ամեն. Ս. Պատարագը Հայրը. ընկերակցութեամբ Աւագ Թարգման Հոգը. Տ. Դաւիթ վրդ. ի, Կառավարչատան մէջ այցելեց Վ. Վ. Հիւսէյն Թագաւորին:

● Դշ. 24 Հոկտ. — Աւագ Թարգման Հոգը. Տ. Դաւիթ վրդ. և Հոգը. Տ. Գեղամ Արղ. ներկայ եղան Ռամալլայի մէջ UNRWA-ի նոր արհեստանոցի բացման հանդիսութեան:

ՆՈՒԱԿԱՆԱՆ ԳԻՍ

7 Հոկտ. Գիրակի գիշեր ժամը 9ին, ժառնգ վարժարանի հանդիսաւորանին մէջ տեղի ունեցաւ հանրածանօթ Գեմանիստ Ռուբէնի Նուագահանգէտը, հովանաւորութեամբ Ս. Բաղաթի Կառավարիչ Վ. Անուար Նուսէյպի, որ որոշեալ ժամին մուտք գործեց սրահ, ներկայ խուռն բազմութեան ծափերուն ընդմէջէն: Ներկայ էին նաև Գերշ. Սրբապետներ և Հոգը. Միաբան Հայրեր:

Արքայական Քայլերգէն և Աւագ Թարգման Հոգը. Տ. Դաւիթ վրդ. ի արարելով բացման խօսքէն ետք, բռն եկաւ Հնորնալի Գեմանիստ, և մօտ երկու ժամեր իր վայելիլ արուեստին մագութեամբ վայելքի պահեր պարզեց ներկաներուն: Տաղանդաւոր Գեմանիստին զայնպիսի վրայ ընկերակցեց յայտնի զայնահակար Օկոսթին Լաման: Յայտագրի վրայ կային հայ ժողովրդական ու աշուղական, ինչպէս նաև օտար երգեր: Գրաւիչ էին մանաւանդ հովանաւորական մեղեդիներն ու Գեմանիստին իսկ ստեղծագործութիւնը եղով ռուսեր Երուսաղէմէնը, որոնք նուագուեցան ա՛յնքան հարմարօրէն և մեծ ապրումով: Իսկ յայտագրի վերջաւորութեան նուագուած Ն. Բ. Գահաժառանգ իշխան Ապարալլայի ձօնուած կրգը-գերբազանցեց միևնրերը ու որոշանդամ ծափաբարձութիւններ խնջ ներկաներէն, և անոնց փափաքէն վրայ կրկնուեցաւ:

Հանգեցը փակուեցաւ գիշերուան ժամը 11ին: